# ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ԿՈՆՖԼԻԿՏԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

ԽՄԿԿ Կենտկոմում կայացավ Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամների ու անդամության թեկնածուների հանդիպում:

Քննարկվեց ռեգիոնում ստեղծված կացությունը: Խոր մտահոգություն արտահայտվեց հանրապետությունների հարաբերությունների վիճակի առթիվ, որոնք վտանգավոր բնույթ են ստացել, հղի են ազգամիջյան կոնֆլիկտը խորանալու սպառնալիքով: Խախտվում են հանրապետությունների տնտեսական կապերը, շրջափակվում են ճանապարհները: Առանձնակի տագնապ են հարուցում գաղթականների պրոբլեմները, տասնյակ հազարավոր մարդկանց անորոշ վիճակը, որոնք զրկանքներ են կրում: Երկու հանրապետությունների միջև երկար ժամանակ շահագրգիռ երկխոսության բացակայությունը չի բխում ժողովուրդների շահերից, չի նպաստում պրոբլեմների լուծմանը:

Կարծիքների լայն փոխանակման ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց երկու հանրապետությունների ջանքերով, առաջին հերթին կուսակցական, խորհրդային ու հասարակական կազմակերպությունների միջոցներով ամեն ինչ անել կուտակված հարցերը քայլ առ քայլ վերացնելու, բոլոր մակարդակներում՝ սկսած հանրապետությունների կոմկուսների կենտկոմներից մինչև աշխատավորական կոլեկտիվներ, երկխոսություն անցկացնելու, հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի բոլոր ուղղություններում ավանդական կապերը վերականգնելու համար և գլխավորը՝ ապահովելու յուրաքանչյուր ընտանիքի, յուրաքանչյուր մարդու անվտանգությունը:

Հանդիպման մասնակիցները մեծ ուշադրություն դարձրին Լեռնային Ղարաբաղի պրոբլեմին, որը, նրանց կարծիքով, իր լուծումը կարող է գտնել սահմանադրական, դեմոկրատական հիման վրա միայն:

Երկու հանրապետությունների կոմկուսների կենտկոմների բյուրոների անդամները համամիտ էին, որ չնայած ռեգիոնում ազգամիջյան հարաբերությունների սուր բարդությանը, չկա այնպիսի հարց, որի լուծումը անկարելի լիներ գտնել փոխադարձ հանդուրժողությամբ, երկու եղբայրական ժողովուրդների բախտի նկատմամբ խոր շահագրգռությամբ:

Հանդիպմանը մասնակցում էին ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամներ, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարներ Ն. Ն. Սլյունկովը, Վ. Մ. Չեբրիկովը:

(ՏԱՍՍ)